Առաջարկություններ և դիտողություններ

էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի
և
էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

1. **Ուսումնասիրելով էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը և «Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, նախ և առաջ առաջարկում ենք դիտարկել վերոնշյալ իրավական ակտերի նախագծերը մեկ իրավական ակտի սահմաններում, գնումների մասին ՀՀ օրենսդրության ամբողջությունըկազմող իրավական ակտերի թիվը կրճատելու նպատակով, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ սահմանվում է էլեկտրոնային գնումների համակարգը (www.armeps.am), որի բաղկացուցիչ մասն է կազմում էլեկտրոնային աճուրդի համակարգը(www.armeps.am/eaction):**

2. Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի հավելվածով սահմանված Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգի (այսուհետ՝ Էլեկտրոնային գնումների կարգ) 2-րդ կետի և «Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի հավելվածով սահմանված Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգի (այսուհետ՝ Էլեկտրոնային աճուրդի կարգ) 2-րդ կետի համաձայն.

Էլեկտրոնային գնումների համակարգը պարունակում է էլեկտրոնային սարքավորումներ, գործիքներ և ծրագրեր, որոնք հեռակարգավորման, հեռահաղորդագրման և էլեկտրոնային եղանակով տվյալների փոխանակման հնարավորություն են տալիս: Բոլոր սարքավորումները տեղադրվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի կողմից սահմանված վայրում:

Էլեկտրոնային գնումների կարգ 6-րդ կետի համաձայն՝
Էլեկտրոնային գնումների համակարգն ունի հայտ ներկայացրած մասնակիցների տվյալները կոդավորելու և մինչև հայտերի բացման պահն այդ տվյալների ապակոդավորման անհնարինությունն ապահովելու հնարավորություն:

Հայաստան, Երևան, 0019, Անտառային փողոց, տուն 164/1,
Հեռ.՝ (374 10) 569589, 569689
Ֆաքս՝ (374 10) 569519
info@transparency.am • www.transparency.am

Էլեկտրոնային աճուրդի կարգի 5-րդ կետի համաձայն
Էլեկտրոնային աճուրդների իրականացումն ապահովող համակարգն ունի մասնակիցների տվյալները, բացառությամբ գնային առաջարկների, կոդավորելու և մինչև էլեկտրոնային աճուրդի ամփոփման ավարտը ներառյալ այդ տվյալների ապակոդավորման անհնարինությունն ապահովելու հնարավորություն:

Համակարգի նկարագրությունը պետք է պարունակի կոնկրետ երաշխիքներ կապված համակարգի անվտանգության և հուսալիության հետ:

Այս նպատակով առաջարկում ենք համակարգին, այն սպասարկող սարքավորումների տեղակայման վայրին, սպասարկող կազմակերպությանը ներկայացվող պահանջները համապատասխանեցնել Տեղեկատվական տեխնոլոգիաների վերաբերյալ ընդունված միջազգային ստանդարտներին կամ դրանց հիման վրա ընդունված ազգային ստանդարտներին(առկայության դեպքում) (ISO/IEC 17799 —Information technology - Security techniques - Code of practice for information security management, ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 27001, ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 27002) և սահմանել շահագործման ընթացքում դրանց համապատասխանությունը ապահովելու հետ կապված պարբերաբար պարտադիր տեղեկատվական անվտանգության անկախ աուդիտի ենթարկվելու հետ կապված պահանջներ(ՀՍՏ ԻՍՕ/ ԻԷԿ 27006) , քանի որ տեխնիկական սպասարկման ընթացքում հնարավոր են ծրագրի կոդերի չթույլատրված փոփոխություններ, որոնք կարող են հանգեցնել համակարգի ամբողջականության խախտման և չարանենգ նպատակներով չարտոնված ու անվերահսկելի մուտքերի իրականացման: Ստանդարտներին համապատասխանության սերտիֆիկատները և աուդիտի եզրակացությունները պետք է տեղադրվեն համակարգի կայքում և հասնելի լինեն հանրությանը:

3. Ինպես արդեն նշվեց, Էլեկտրոնային գնումները և էլեկտրոնային աճուրդները ուղիղ կապված են տեխնիկական սարքավորումների և ծրագրային հապահովման հետ, ինչի արդյունքում անխուսափելի են տեխնիկական խնդիրները: Սահմանված չեն կոնկրետ ընթացակարգեր տեխնիկական խնդիրների առաջացման դեպքերի համար, մասնավորապես կարգավորված չեն այնպիսի հարցեր ինչպիսիք են՝

ա. Մասնակիցները իրավունք ունեն մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետըլրանալը ցանկացած օր և օրվա ցանկացած ժամի ներկայացնել հայտ և այդ ընթացքում տեխնիկական խնդիրներին արձագանքման նպատակով մասնակիցները ում պիտի դիմեն, գոյություն ունենալու է արդյոք մասնակիցներին աջակցելու համար շուրջորյա տեխնիկական սպասարկման ծառայություն, եթե

Հայաստան, Երևան, 0019, Անտառային փողոց, տուն 164/1,
Հեռ.՝ (374 10) 569589, 569689
Ֆաքս՝ (374 10) 569519
info@transparency.am • www.transparency.am

այո, ապա խնդիրների առաջացման դեպքում մասնակիցները ինչ փաստաթղթային ապացույցներպետք է ստեղծեն և ինպես, ինչ ժամկետների մեջ, հատկապես էլեկտրոնային գնումների ժամանակ, երբ հայտը ներկայացնելու վերջնաժամկետըհամընկնում է շաբաթվա առաջին աշխատանքային օրվա սկզբին:

բ. Տեխնիկական խնդիրների առաջացման հետևանքովմասնակիցներըիրենց ցանկացած պահին հայտ ներկայացնելու հնարավորություն չունենալու դեպքում հայտերի ներկայացման վերջնաժամկետը երկարաձգվելու է թե ոչ կամ էլեկտրոնային աճուրդի դեպքում այն կասեցվելու է և շարունակվելու, թե դադարեցվելու է(ընթացակարգը չեղյալ է հայտարարվելու) :

գ. Վերոնշյալ ընթացակարգերը ամրագրվելու են գնահատող հանձնաժողովի համապատասխան որոշումներով, որպեսզի մասնակիցները հնարավորություն ունենան անհրաժեշտության դեպքում բողոքարկել դրանք, թե ոչ:

Վերոնշյալ հարցերը և դրանց վերաբերյալ մոտեցումները հստակ սահմանման կարիք ունեն, որը առաջարկում ենք իրականացնել տվյալ իրավական ակտով:

4. Էլեկտրոնային գնումների կարգով և Էլեկտրոնային աճուրդի կարգով սահմանվում են հետևյալ հասկացությունները. լիազորված մարմին՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն կամ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից լիազորված իրավաբանական անձ և տեխնիկական սպասարկող- համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն կամ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից ընտրված իրավաբանական անձ:

Անորոշ է թե որ մարմինն է իրականացնելու վերահսկողություն համակարգի նկատմամբ, եթե համակարգի լիազորված մարմինը և սպասարկող մարմինը հանդիսանա ՀՀ ֆինանսների նախարարությունը: Արդյոք կարո՞ղ է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից լիազորված իրավաբանական անձը և տեխնիկական սպասարկման համար ընտրված իրավաբանական անձը հանդիսանալ միևնույն անձը և եթե այո, ապա ո՞ր մարմինն է իրականացնելու նրանց նկատմամբ վերահսկողություն: Եվ վերջապես իրավունք ունե՞ն արդյոք լիազորված և ընտրված իրավաբանական անձինք կամ նրանց հիմնադիրների հետ փոխկապակցված անձինք և նրանց կողմից հիմնադրված կազմակերպությունները որպես ընթացակարգի մասնակից ներգրավվելու գնման գործընթացներում (էլեկտրոնային գնումներում և էլեկտրոնային աճուրդներում): Լիազորված անձը և տեխնիկական սպասարկում իրականացնողը ինչպիսի լիազորություններ ունեն, մասնավորապես տեխնիկական

Հայաստան, Երևան, 0019, Անտառային փողոց, տուն 164/1,
Հեռ.՝ (374 10) 569589, 569689
Ֆաքս՝ (374 10) 569519
info@transparency.am • www.transparency.am

սպասարկում իրականացնողը ինչ աստիճանի միջամտություն իրականացնելու իրավունք ունի համակարգի ծրագրային ապահովման կոդերին, և կոդերի փոփոխության դեպքում արդյոք ծրագիրը ենթակա չե պարտադիր տեղեկատվական անվտանգության անկախ աուդիտի ենթարկման:

Առաջարկում ենք թվարկված հարցերի պատասխանները ինչպես նաև նշված փոխկապակցված անձանց սահմանումը ներկայացնել տվյալ իրավական ակտով:

5. Օրենքի 6-րդ հոդվածի1-ին մասի համաձայն՝
բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ.

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

3) որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

4) որոնց վերաբերյալ հայտը ներկայացվելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում առկա է օրենքով սահմանված կարգով կայացված անբողոքարկելի վարչական ակտ՝ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար.

5) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հայաստան, Երևան, 0019, Անտառային փողոց, տուն 164/1,
Հեռ.՝ (374 10) 569589, 569689
Ֆաքս՝ (374 10) 569519
info@transparency.am • www.transparency.am

Առաջարկում ենք նախատեսել թվարկված անձանց մուտքը համակարգ ավտոմատ կերպով արգելափակվելու հնարավորություն և ամրագրել այն տվյալ իրավական ակտով:

6. Էլեկտրոնային գնումների կարգում և էլեկտրոնային աճուրդի կարգում որևէ նշում չկա հայտում ներառվող փաստաթղթերը ՀՀ ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների կողմից հաստատվելու պահանջների վերաբերյալ: Մասնավորապես էլեկտրոնային թվային ստորագրության կիրառության դեպքերը, ստորագրությանը ներկայացվող պահանջները (հղումներ կարգավորող իրավական ակտերին), համակարգի կողմից այն ավտոմատ ճանաչվելու կամ չճանաչվելու պայմանները, ինչես նաև, եթե կիրառվելու են միակողմանի հաստատված տուժանքի ձևով հայտի ապահովման միջոցներ և վերջիններս պարունակելու են տուժանքի համաձայնագրին կից վճարման պահանջագիր ներկայացնելու պահանջ՝ տվյալ փաստաթուղթը ստորագրելու կարգը, քանի որ վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգը չի նախատեսում էլ. ստորագրությամբ հաստատում:

Առաջարկում ենք տվյալ իրավական ակտով հստակ սահմանել էլեկտրոնային և ձեռագիր ստորագրության կիրառման դեպքերը և էլեկտրոնային ստորագրությանը ներկայացվող պահանջները:

7. Էլեկտրոնային գնումների կարգի 19-րդ կետի համաձայն՝

1) բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ընթացակարգով գնումների կատարման դեպքի, գնահատող հանձնաժողովի քարտուղարը՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ որակավորումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու մասին.
2) մասնակիցը պահանջվող փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուղարկում է հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին: Քարտուղարը պարտավոր է մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերն ստանալու օրը հաստատել դրանց ստանալու հանգամանքը՝ հրավերում նշված իր էլեկտրոնային փոստից մասնակցի էլեկտրոնային փոստին հավաստում ուղարկելու միջոցով:

Էլեկտրոնային համակարգի առկայության պարագայում անհասկանալի է պատվիրատուի և մասնակցի միջև հաղորդակցության նման եղանակով

Հայաստան, Երևան, 0019, Անտառային փողոց, տուն 164/1,
Հեռ.՝ (374 10) 569589, 569689
Ֆաքս՝ (374 10) 569519
info@transparency.am ● www.transparency.am

կազմակերպումը, որը նաև անթույլատրելի է, քանի որ պայմանավորված երկու հանգամանքով մեծ կոռուպցիոն ռիսկ է պարունակում՝

ա. Գնահատող հանձնաժողովների քարտուղարների գերակշռող մասի կողմից օգտագործվում է անձնական էլ.փոստ, մնացածի կողմից պատվիրատուի պաշտոնական էլ.փոստ, և հետևաբար, անկախ էլ.փոստի պատկանելությունից մուտքային նամակները հեռացնելու դեպքում կպահանջվի բարդ ընթացակարգ՝ ներառյալ դատարանի որոշում, էլ.փոստի վերծանումը ստանալու և փաստաթղթերի ուղարկման փաստը հաստատելու համար:

բ. Գործող օրենսդրության համաձայն եթե առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը չի ներկայացնում որակավորումը հիմնավորող փաստաթղթեր, ապա նրա հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակցին:

(Վերը նշված խնդրի շուրջ առկա է նաև Գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված «ԱՄ-ԱՔ-ՇՀԱՊՁԲ-01-17» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ բողոք, որը բավարարվել է թիվ 17/17 որոշմամբ, իսկ որքան են դեպքերը, երբ մասնակիցը պարզապես չի բողոքարկել անհայտ է):

Առաջարկում ենք բոլոր տեսակի հաղորդագրությունները և փաստաթղթերի ընդունումը կազմակերպել համակարգի միջոցով, որը թույլ չի տա տեղեկատվության միտումնավոր հեռացումը նաև նախատեսել այլընտրանքային միջոց՝ փաստաթղթերը թղթային տարբերակով պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգ մուտքագրելու հնարավորություն:

8. Էլեկտրոնային գնումների կարգով և Էլեկտրոնային աճուրդի կարգով սահմանված չեն գնահատող հանձնաժողովի նիստերին մասնակիցների մասնակցելու առանձնահատկություններ, դա նշանակում է , որ տվյալ հարցը կարգավորվելու է գնումների կազմակերպման ընդհանուր կարգով:

Առաջարկում ենք հստակ սահմանել Էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների ժամանակ մասնակիցները հնարավորություն ունեն մասնակցելու գնահատող հանձնաժողովի նիստերին, թե դրանք իրականացվելու են վիրտուալ միջավայրում և ֆիզիկական մասնակցությունը անհնար է: Վերջինիս դեպքում սահմանել անհրաժեշտ վիրտուալ միջոցներ որոնք առաջարկվում են մասնակիցների ռեալ ժամանակում գնահատող հանձնաժողովի վիրտուալ նիստերին ներկայությունըապահովելու համար ճիշտ այնպես եթե նրանց ներկայությունը լիներ ֆիզիկապես:

Հայաստան, Երևան, 0019, Անտառային փողոց, տուն 164/1,
Հեռ.՝ (374 10) 569589, 569689
Ֆաքս՝ (374 10) 569519
info@transparency.am • www.transparency.am

9. «Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի 2-րդ կետով սահմանված է.
Լիազորել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երեսնօրյա ժամկետում հաստատել էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռքբերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը, ինչպես նաև էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման ուղեցույցը:

16.12.2016թ-ին ընդունված «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 14) –րդ կետի համաձայն՝
1. Սույն օրենքի նպատակի և պահանջների կատարման ապահովման համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է՝
1)
2)
...)
14) էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը.

Հաշվի առնելով վերոգրյալը, գտնում ենք, որ տվյալ ցուցակը (ցանկը) պետք է սահմանվի ՀՀ կառավարության կողմից և նպատակահարմար է տվյալ ցուցակը սահմանել դիտարկվող իրավական ակտով որպես հավելված: Այդ նպատակով առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարին ՀՀ կառավարությանը ներկայացնել եզրակացություն նախորդ տարիների ձեռքբերման վիճակագրական տվյալներով մեծ մրցակցությամբ խոշոր շուկաներում առկա լայն տարածում ունեցող ապրանքների և ծառայությունների վերաբերյալ, որոնց հետագա սպասարկումը չի ենթադրում ծախսեր կամ դրանք անշան են: Անհրաժեշտ է սահմանել աճուրդի կիրառման նվազագույն պայմանները որի դեպքում այն նպատակահարմար է՝ գրանցված մասնակիցների նվազագույն թիվը, գնումների այն շեմը որից սկսած տվյալ ցուցակում ներառված առարկաներիգնումները պետք է իրականացվեն էլեկտրոնային աճուրդների միջոցով:

9.Գտնում ենք անարդյունավետ է ունենալով էլեկտրոնային աճուրդի համակարգ, կիրառել այն միայն որպես առանձին ընթացակարգի՝ էլեկտրոնային աճուրդի կազմակերպմանգործիք:

Առաջարկում ենք, դիտարկել էլեկտրոնային աճուրդը որպես այլ ընթացակարգերում գների հավասարության կամ բոլոր ներկայացված գները սահմանված նախահաշվային գինը գերազանցելու դեպքում, որպես գների

Հայաստան, Երևան, 0019, Անտառային փողոց, տուն 164/1,
Հեռ.՝ (374 10) 569589, 569689
Ֆաքս՝ (374 10) 569519
info@transparency.am • www.transparency.am

նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների փոխարեն կիրառվող գործիք:

10. Որևէ հիշատակում չկա էլեկտրոնային գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողականության մոդուլների (մոդուլային համակարգ) կիրառության վերաբերյալ, որը կարծում ենք էլեկտրոնային ձևով կազմակերպվող գնումների մասն է կազմում և կարող է արտացոլվել տվյալ իրավական ակտում, գնումների մասին ՀՀ օրենսդրության ամբողջությունը կազմող իրավական ակտերի թիվը կրճատելու նպատակով:

11.Եթե էլեկտրոնային աճուրդների կիրառումը պարտադիր է բոլոր պատվիրատուների համար, հարց է առաջանում, ինչու այս դեպքում անցում չի կատարվում ամբողջությամբ էլեկտրոնային գնումների համակարգի և պատվիրատուների մի մասը դեռ շարունակելու են թղթային տարբերակով գնումներ կազմակերպել: Եթե պարտադիր չէ բոլոր պատվիրատուների համար ապա առաջարկում ենք սահմանել պատվիրատուների շրջանակը ում համար պարտադիր է:

Առաջարկում ենք տվյալ իրավական ակտով իրավունք վերապահել և խորհուրդ տալ իրականացնել գնումները էլեկտրոնային գնումների համակարգի միջով այն պատվիրատուներին, ում համար այն պարտադիր չէ:

Հայաստան, Երևան, 0019, Անտառային փողոց, տուն 164/1,
Հեռ.՝ (374 10) 569589, 569689
Ֆաքս՝ (374 10) 569519
info@transparency.am ● www.transparency.am